ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 248 -Ա

« 16 » ՍԵՊՏԵՄԲԵՐ 2025Թ

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԵԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 224-րդ և 226-րդ հոդվածների, 227-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-մասի 4-րդ կետի, «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 22-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Ազատեկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 49-րդ կետը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2025 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 01/15.1/5337-2025 գրության հիման վրա «ՀՀ Վայոց ձորի մարզի Ազատեկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կ.Ղազարյանի 2025 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 17/2025 գրությամբ ներկայացված գրավոր բացատրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու՝ 2024-2025 ուսումնական տարվա համար դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում սովորողների տարեվերջյան փոխադրում չիրականացնելու հետևանքով «Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի թիվ 216-Ն որոշման թիվ 1 հավելվածով սահմանված անվանացանկի 1. ՏՆՕՐԵՆ՝ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ բաժնի 1-ին՝ աշխատանքային գործառույթները կետի 22-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի օգոստոսի 17-ի «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի վարման կարգը սահմանելու և կրթության ոլորտի պետական վարչական ռեգիստրը

ներդնելու մասին» N 65-Ն հրամանով հաստատված կարգի պահանջները խախտելու համար «ՀՀ Վայոց ձորի մարզի Ազատեկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կարապետ Ղազարյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ կիրառելով «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 07.02.2022թ. թիվ 487 աշխատանքային պայմանագրով (03.10.2024թ. թիվ 487/1 փոփոխություն) նշված karen-kazaryan84@gmail.com էլեկտրոնային հասցեով Կ.Ղազարյանին ծանուցելու հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր